ԼՂԻՄ. ԵՐԿՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԴԺՎԱՐԻՆ ԱՌՕՐՅԱՆ

Ինչպես արդեն հաղորդվել է, Լեռնային Ղարաբաղի համար անհանգիստ ամիսներին գյուղացիները հիմնականում չէին դադարեցրել աշխատանքը: Սակայն աշխատանքն ինքն այսօր նրանց ուրախություն չի բերում, քանի որ նրանք, ինչպես որ Արցախի ամբողջ հայ բնակչությունը, սրտով ու հոգով համերաշխ են գործադուլավորների պահանջների հետ: Դա, ինչպես և այս տարվա եղանակային անբարենպաստ պայմանները, չէին կարող չանդրադառնալ վերջնական արդյունքների վրա: Երաշտի պատճառով ոչնչացավ աշնանացան ցանքսերի մոտ 90 տոկոսը: Ու այսօր արտադրված է ընդամենը 18 հազար տոննա հացահատիկ: Համեմատության համար ասենք, որ անցած տարի Ղարաբաղի հողագործները ինքնավար մարզի համար այդ կարևոր գյուղատնտեսական մթերքից ստացել էին ավելի քան հարյուր հազար տոննա: Ագրարային համալիրը զրկվել է որակյալ սերմացուից:

Հացահատիկային կուլտուրաների ասպարեզում ստեղծված անբավարար վիճակը, անկասկած, բացասաբար անդրադարձավ ծղոտի կուտակման վրա: Այսօր ընդամենը 19,8 հազար տոննա ծղոտի պաշար կա: Ասենք, մյուս կերերի՝ թե կոշտ, թե հյութեղ և թե համակցված կերերի հարցում էլ վիճակը ավելի լավ չէ:

— Սերմացու ֆոնդի պակասը լրացնելու համար մեզ օգնության ձեռք մեկնեցին Ուկրաինայի հողագործները,— Արմենպրեսի թղթակցին ասաց ԼՂԻՄ-ի ագրոարդի նախագահի տեղակալ Վլադիմիր Զաքիյանը: —Նրանք խոստացել են մեզ մատակարարել աշնանացան ցորենի ու գարու 8900 տոննա սերմացու: Ու պետք է ընդունել, որ Ուկրաինայի ընկերների խոսքը գործից չի տարբերվում: Այդ նույն միութենական հանրապետությունից մարզը ստանալու է նաև 20 հազար տոննա համակցված կեր:Սակայն արցախցի հողագործը ձեռքերը ծալած չի նստում: Մենք որոնում ենք սեփական ռեզերվներ, որոնց գործադրումը թույլ կտա դուրս գալ դժվարին կացությունից: ԼՂԻՄ-ից հատուկ բրիգադներ աշխատում են Հյուսիսային Կովկասում կերի հայթայթման համար: Մենք հույս ունենք, որ ձեռնարկվող միջոցները թույլ կտան 80—85 տոկոսով բավարարել մարզի պահանջմունքները կերի հարցում:

Այս օրերին Ռուսաստանի Ֆեդերացիայի տարբեր հասցեներով ուղարկվեց ղարաբաղյան խաղող: Ցավոք, ճանապարհային շրջափակման պատճառով այդ խաղողը Հայաստանը դեռ չի կարողանում ստանալ պլանավորված քանակով: Իսկ ադրբեջանական երկաթուղու ղեկավարությունը հրաժարվում է սառնարան-վագոններ տրամադրել այդ նպատակի համար:

Թերևս միայն բանջարաբույծները ուրախացրին այս տարի, ժամանակին գիտակցելով, որ «ընծաների» սպասելու հարկ չկա: Միայն Մարտակերտի շրջանը այսօր ի վիճակի է սպառողներին օրական մատակարարել 40—45 տոննա սննդամթերք: Թե գյուղացիների աշխատանքը ինչքանով կկարողանա ուրախացնել քաղաքաբնակներին՝ հիմա շատ բանով կախված է... իրավակարգի պահպանության մարմինների հստակ գործողություններից, քանի որ բոլոր վարորդները չէ, որ սիրտ կանեն նստել ավտոմեքենայի ղեկի առջև, երբ ճանապարհին ցանկացած պահին կարող են հարձակում գործել անպատասխանատու անձինք: Հարկավոր է վերջ դնել ինքնավար մարզի ճանապարհային շրջափակմանը: Դա պատիվ չի բերում Ադրբեջանական ԽՍՀ-ին, ոչ էլ երկրին:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶ